

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Յիսուսի հրաշքները



Written by: Edward Hughes
Illustrated by: Byron Unger; Lazarus
Adapted by: E. Frischbutter; Sarah S.
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children
www.M1914.org

BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada

©2012 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Յիսուս հրաշքներ գործեց: Հրաշքները նշաններ էին, որպեսզի ցոյց տան, թե Յիսուս իրաւ Աստուծոյ որդին է: Առաջին հրաշքը հարսանիքի մը ատեն եղաւ: Խնդիր մը ծագեցաւ: Բաւարար գինի չկար ամենուն:



Մարիամ, Յիսուսի մայրը, Յիսուսի փոխանցեց
այդ խնդրին մասին, ետքը ըսաւ որ ծառաները
կատարեն այն ինչ որ Յիսուս կը հրամայէ:



"Այս կաթսաները շուտով լեցուցիք",
ըսաւ Յիսուս, "Չո՞ր" կրնային
հարցուցած ըլլալ: Այո, ջուր էր
Յիսուսի պահանջածը:



Յետոյ Յիսուս ծառայի մը ըսաւ,
որ կաթսայ մը առնէ, եւ
այն համտեսել տայ
այն մարդուն, որ
պատասխանատու
էր խրախճանքին:
Հիմա ջուրը գինիի
վերածուեցաւ:
Լաւ գինիի:
Ամենաընտիր
գինիի:




Ծառաները ապշած էին:
Յիսուս ջուրը վերածեց
գինիի: Միայն Աստուած
կրնար այսպես հրաշք
սը գործել:




Յիսուս ուրիշ հրաշքներ ալ գործեց: Երեկոյ մը ինք եւ իր աշակերտները գացին Պետրոսին տունը: Պետրոսին կեսուրմայրը շատ հիւանդ էր եւ տաքութեան մէջ:



Յիսուս դպաւ հիւանդ կնկան ձեռքին: Այդ
վայրկեանին կինը լաւացաւ: Ան ոտքի
ելաւ, որպէսզի Յիսուսին եւ իր
աշակերտներուն ծառայէ:



Յիսուս, Աստուծոյ որդին կրնայ օգնել: Յիսուս
օգնեց բոլորին: Ով որ իրեն քով եկաւ առողջացաւ:
Ան որ կը սողար, կը տառապէր, գաւազանով կը
կաղար, հիմա սկսաւ քալել, վազել եւ ուրախանալ:



Ուրիշներ ալ
Եկան, անոնք
որոնք տգեղած
Էին բորոտով:






Անոք լման
եւ մաքուր եղան
անմիջապէս, եր
Յիսուս բժշկեց
անոնց:



Այր մարդեր եւ կիներ սատանաներով
տարապաճ,
կեցան
Յիսուսի
առջեւ:



Ան հրամայեց սատանաներուն,
որ ազատ
ձգեն անոնց:
Սատանաները
ենթարկուեցան
անոր, վախով
լեցուն տխուր
մարդիկ
դարձան
ուրախ եւ
հանդարտ:



Ժողովին ետեւը, չար մարդիկ կը փորձէին օգնել
իրենց ընկերոջ, որ Յիսուսի մօտեցնէն: Սակայն
անոր մօտ չէին կրնար մօտենալ: Ի՞նչ կրնային
ընել:



Հիւանդ մարդը շալկեցին տունի
մը տանիքը, չորս հաւատացեալ
մարդիկ բացին տանիքը եւ
մարդուն վար իջեցուցին:
Հիմա ան Յիսուսի
քովն էր:




Յիսուս տեսաւ, որ չորս
ընկերները հաւատքով
զօրաւոր էին: Ան
հիւանդ մարդուն
ըսաւ. "Քու
մեղքերդ
ներուած են:
Առ անկողինդ եւ
քալէ": Մարդը
ոտքի կեցաւ,
զօրաւոր
եւ ուժով:
Յիսուս անոր
առողջացուց:




Քիչ ետք, Յիսուս նաևու մը մէջ էր իր
աշակերտներուն հետ: Սաստիկ
փոթորիկ ծովը տակնուվրայ
ըրաւ: Յիսուս քնացած
էր: Սարսափաց
աշակերտները
արթնցուցին Յիսուսին.
"Տէր ազատէ՛ մեզի",
կը պոռային անոնք.
"Մենք մեռած
ենք":



"Անշարժեցեք", Յիսուս հրամայեց ալիքներուն:
Անմիջապես ծովը հանդարտեցաւ. "Այս ի՞նչ տեսակ
մարդ է": Իր աշակերտները փսփսացին: Նոյնիսկ
հովը եւ ծովը իրեն կը հնազանդին: Անոնք
հաւատացին, որ Յիսուս Աստուծոյ
որդին է, որովհետեւ իր
հրաշքերով Ան ցոյց
տուաւ իր փառքը:
Աշակերտները չէին



գիտեր այդ բանը, բայց անոնք
տակաւին պիտի տեսնէին
Յիսուսը աւելի մեծ եւ
կարեւոր մարդոց մէջ:



Յիսուսի հրաշքները


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթէոս 8 - 9, Մարկոս 1 - 2, Մարկոս
4, Ղուկաս 4, Ղուկաս 8, Յովհաննէս 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մադնոս 119:130





Կերջ

40

60



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի ղրկեց, որպէսզի էաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

